



ՄԱՐԹԱՐԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36 ՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1887.

ԹԻԻ 3890

ՄԱՐԹԱՐԵՐԹ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի: Գաւառաց համար 70 դր2. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրեալը ղրկելու է առ մատակարարութիւն Սրեւելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգ. Տեսութիւն. Կազմակերպութիւն Պատրիարքարանի. Քննութեան զանազան վիճակները. Ուշադարձութիւն (ՏԲ. ՊՕՂՈՍ ԷՄԻՐՁԷ). Տեղեկորդ. ասորեւործ մահուան Գաբրիէլ Աբգեպիս Կոպուսի Այվազեան. Քերթնում (ԳՈՂ.ԹՆԵՅԻ). Բնագրութիւն Կ. Պոլիս. Մեծն Վասիլ Հայկազնի (Պ. Տ.): Վեպ. Հայաստանի բարբեր. Սիսակ Եւ Սոսուն, Բը Նուրեան սոխակներ. (Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ). Քաղաքացիական Եւրոպական Լրոց. Արտաքին, Ներքին, Ազգային:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆԻ

Մեր անցեալ շաբաթ օրուան յօդուածով բացատրեցինք այն տխուր աղաւորութիւնն զոր ըրած է մեր վրայ Քաղաքական Ժողովոյ ընտրութեան երկարաձգման գործողութիւնն, և հասանք սա որոշ եզրակացութեան թէ մեր Սահմանադրութեան մէջ այս ընտրական եղանակը թերի է և կարօտ բարեփոխման:

Որովհետեւ մեր ազգային մարմինը թշուառով կ'ապրին և դանդաղութիւնը մեր ազգին մէկ զժապոյժ սովորութիւնն եղած է, հաւանականաբար դժու շատ և շատ տարիներ պիտի սպասենք որպէս զի Քաղաքական Ժողովոյ համար նոր և ժամանակիս պահանջման համաձայն եղանակ մը որոշենք և գործադրենք:

Պիտի առարկուի թէ Ազգը Պատրիարք ունի և թէ մէկ քանի ամսուան երկարաձգում չի կրնար ունենալ այն վնասներն որք կ'եթադրուին Քաղաքա-

կան Ժողովոյ բացակայութենէն: Այսպիսի առարկութիւն մը ըստ մեզ անգոր է և տկար: Յիշուի այսօր Պատրիարք մ'ունինք որ կ'աշխատի, բայց կրնայ լինիլ որ Պատրիարքական աթոռը թափուր մնայ և եթէ նորա գահակալը չը լինի այնչափ աշխատասէր և գործունեայ, այն ատեն ո՛ր կը մնայ ազգային գործոց վիճակն. միւս կողմանէ հարկ է գիտնալ որ մեր Պատրիարքներ սահմանադրական Պատրիարքներ են, որով չեն կարող իրենց առեալ անհրաժեշտ և ստիպողական պարագայներ, գործել առանց որոշմանց և գիտակցութեանց Ժողովոց: Ուստի պէտք է փնտռենք դարման մը որով կարելի լինի Պատրիարքարանի գործոց շարունակումն առանց ներկայութեան Քաղաքական Ժողովոյ: Այս դարման ստիպողական է ըստ մեզ, վասն զի վարչութիւն մը այն ատեն զօրաւոր է և ազդեցիկ երբ նորա գործունէութեան մէջ չեն լինիր ընդհատումներ, ինչպէս ներկայ Քաղաքական Ժողովոյ ընտրութեան պահուն:

Ի՞նչ է այս դարմանը, ի՞նչտ պարզ է, միանգամայն նորութիւն չը պարունակեր իւր մէջ, վասն զի իրարու յաջորդող մէկ քանի Քաղաքական Ժողովներ ուսումնասիրած են զայն և մասամբ գործադրած: Այս դարմանն է Կազմակերպել և բաժնել Պատրիարքարանի ներքին գործերն այնչափ ճիւղերու որչափ կը ներէ գործոց բնութիւնն, և գնել իւրաքանչիւր ճիւղի վրայ պատասխանատու պետ մը՝ տալով արտօնութիւն այդ պետերուն գումարիլ շաբաթը մէկ կամ երկու օր, որոշելու համար այն ամէն գործերն որք ազգին ընդհանուր և կենսական շահուց չեն վերաբերիր: Այս որոշմունք Պատրիարք Սրբազանի հաւանութիւնն ստանալէ յետոյ կը գործադրուին պատկանեալ պետի կողմանէ:

Այս գաղափարին մասնական գործադրութիւնը տեղի ունեցաւ Եռսուփեան էֆէնտիի վարչութեան օրով և յետոյ Նուրեան էֆէնտիի վարչութիւնը քիչ մ'աւելի ընդարձակութիւն տուաւ ասոր. այժմ ներկայ Քաղաքական Ժողովոյ կը մնայ վերջնական կարգադրութիւն մ'ընել:

Ի՞նչ ըրին Եռսուփեան և Նուրեան էֆէնտիի վարչութիւնը. նախ բաժնեցին, ինչպէս առաջարկած ենք ի վերեւ, ներքին գործերն զանազան ճիւ-

ղերու, որոց վրայ անուանեցին աւելի կամ նուազ կարող պետեր: Ներկայ Քաղաքական Ժողովոյ անկ է խորհիլ թէ այդ բաժանումն ք բաւական են, և թէ այդ ճիւղերու վրայ գտնուող պաշտօնեայք ձեռնհաս են իրենց վրաստահուած պաշտօններուն մէջ. երբ միանգամ այս մասին որոշում կը տրուի, այն ատեն Քաղաքական Ժողովն կրնայ յատուկ կանոնադրութեամբ մը յանձնել պետերու Ժողովոց այն կարգ մը գործերն որք ի դուր գրաւած են մինչեւ ցարդ պաշտօնի վրայ եկող Քաղաքական Ժողովոյ ժամերն:

Մեր այս առաջարկութենէն հետեւելիք օգուտներն այնչափ մեծ են եւ դիւրըմբռնելի, որ աւելորդ աշխատութիւն մը կը համարինք մանրամասնօրէն թուել զանոնք. բաւական է ըսել թէ ոչ միայն ժամանակի կորուստ չը լինիր, այլ գործերն կը տնօրինուին եւ կը գործադրուին աւելի արագ կերպով. միանգամայն ունենալով պատասխանատու պաշտօնեայքներ, կ'ըստիպենք զանոնք աւելի ուշադիր ըլլալու իրենց պաշտօնին մէջ եւ վարժեցնելով զանոնք այսպիսով առանձինն գործելու, կ'ունենանք ձեռնհաս, կարող եւ հմուտ պաշտօնեայքներ: Նոյնպէս Քաղ. Ժողովը այս կերպով աղատ ժամեր ունենալով՝ կրնան այն ատեն իրենց ուսումնասիրութեան առարկայ ընել Ազգին աւելի ընդհանրական եւ կենսական գործերն, եւ այսպէս փոխանակ օրն օրին ապրելու, կրնան նոր հորիզոններ բանալ ազգային յառաջադիմութեան:

ՈՒՇԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

(CATALEPSIE)

Քննութեան այս վիճակը առաջինն է որ տեղի կ'ունենայ ուշաբարձելի ենթակայից վրայ, բայց եւ այնպէս ճիշտ վայրկեանին հասնիլն անհրաժեշտ է, որովհետեւ յոյժ վաղանցուկ ըլլալով իսկոյն քննութեան կը փոխուի:

Արդ եթէ կամենամք յառաջ բերել իրր նախնական վիճակ աչաց սեւեռմամբ կամ փայլուն առարկայի մը անքթիթ նայելով, պարտ է ընտրել միշտ այն վայրկեանն յորում ենթակայի աչքերն անշարժ եւ արձանացեալ կը մնան, զօդիլ թաղանթներն (membranes conjonctives) կը ներարկուին իսկոյն պէտք է հեռանալ անտի կամ ա-

առարկայն ի բաց առնուել, յայնժամ ուշաբարձութիւնն կը հաստատուի իսկ ընդհակառակն աչաց սեւեռումը պահ մի աւելի շարունակելով քնաթմբութիւնն յառաջ կը բերեք:

Այս ատարացոյց, ուրեմն որ միեւնոյն եղանակն իւր տեւողութեան համեմատ կրօնայ երկու տարբեր վիճակներ արտադրել:

Սաստիկ լուսաւորութիւն մը կամ հնչիւն մը կրնան սւշաբարձութիւն յառաջ բերել իրրեւ նախնական վիճակ: Արդարեւ այս կերպով պարտ է մեզ բացատրել, շանթի և որոտման յառաջ բերած ուշաբարձական վիճակներն:

Ինչէլ ճինէվրացի Աօ-բժշկէ քաղելով երկու ծառայներու դէպքը՝ կ'աւանդէ մեզ, որք՝ փոթորկալից օր մը՝ սաստիկ որոտման միջոցին, քաղաքին տարբեր տեղերն միեւնոյն վայրկեանին ուշաբարձութենէ բռնուեցան: Ալեքսան ևր պատմէ թէ շանթի հարուածով երկու մարդ, երկու տղայ, երկու էջ եւ մի չուս ուշաբարձութենէ զարնուեցան եւ երկու տղայք միայն աղատեցան:

Քարթան կ'ընծայէ մեզ ութ հնձողներու պատմութիւնն, որք ծառի մը հովանոյն ներքեւ ճաշելու միջոցին, շանթահար լինելով, վերջին վայրկեանն ունեցած դիրքերնին կատարելապէս պահած էին յետ մահու:

Պապէն (Annales d'hygiène et de médecine légale, 1854) բազում նմանօրինակ եղելութիւնք կ'աւանդէ մեզ:

Թովմաս Աբրահայրն, յամին 1851, Վիէնայի Մօնօրկոյն եկեղեցւոյն մէջ պատարագած պահուսն կայծակնահար եղաւ, եւ կատարեալ ուշաբարձութեան մէջ իւր բնակարանը փոխադրեցաւ:

Նանսիի այդեպաններէն միոյն կինը հարսնուկ (coquelicot) քաղած ժամանակ շանթահար լինելով, դիակը ոտքի վրայ կանգնած եւ փոքր ինչ դէպ յառաջ կըսած եւ ի ձեռին ծաղիկ մը բռնած գտնուեցաւ:

Իսկ այն ենթակայից վրայ, որք նախընթաց յաճախակի փորձերով չափազանց զգայականութիւն մը ստացած են, ուշաբարձութիւն յառաջ բերելու համար, տկար հնչիւն մը եւեթ բաւական է, օրինակ իմն, բիւրեղեայ գաւաթի մը հարուածը, կամ թերթ մը թուղթ ձվելէ արտադրեալ ընդունից:

Իրրեւ առաջնական վիճակ, ուշաբարձութիւնը կ'ընդունուի նաեւ կոպից կաշուցամբ եւ այս պարագային մէջ ի նկատի առնելու է այն վայրկեան յորում անդամք իրենց գրաւած դիրքն անսահմանապէս կը պահեն. կը մնայ միայն ենթակային աչքերը բանալ:

Ուշաբարձութիւնը կը ծնի նաեւ իրրեւ երկրորդական վիճակ քնաթմբութեան հետեւանք ըլլալով, բաւ է ենթակային մի կամ երկու աչքերն լուսաւոր միջավայրի մը մէջ բանալ:

Ուշաբարձութեան մէջ գտնուող ենթակայն, զոգցես իմն իւր կեցուածքին մէջ քարացեալ է, աչքերն անշարժ և անթիթ, բիւրեւ թեթեւապէս ընդլայնեալ, կոպերն լայնօրէն բացուած, թափանցիկ եղջերեայն (cornée transparente) անզգայ է (ի բաց առեալ քանի մը հազուադէպ պարագայներ): այնպէս որ օտար մարմին մը կրնամք մտնեցնել եւ զրգուել առանց կոպից կամ ակնային գնդի որ եւ է շարժում պատճառելու:

Մարմն գրեթէ անզգայ է, եւ մասնաւորապէս ընդ շատ անեղծ կը մնան, որով կարելի կ'ըլլայ ենթակային հետ հաղորդակցութեան մէջ մտնել: Անդամք որ կակուզ եւ զիւրաշարժ կ'երեւին, մերթ-յոթ անընդհան եւ մինչեւ անգամ ծանրութեան օրինաց հակառակ զիրք կ'ստանան եւ ժամերով կը պահեն: Այսպէս ենթակային գլուխն եւ կրուկն երկու աթոռներու վրայ յենլով, մարմինն փայտէ անթեքելի ձողի մը նման կը մնայ: Քնաթմբութեան մէջ մեր նկարագրած կարկամութեան նմաններն ուշաբարձութեան մէջ ալ տեղի կունենան: Բաց աստի, քնաթմբութեան ժամանակ տեղի ունեցած կարկամութիւնը ուշաբարձական վիճակի մէջ ալ իրենց կատարեալ սաստիկութեամբ կը մնան:

Սակայն այն ջղաժկանային զերգրուականութենէ զատ կարգ մը նոր կարկամութիւնք կան, զորս արդէն նախընթաց յօդուածով յիշած եմ, այսինքն մարմնի մակերեւութային զրգումանէ յառաջ եկած կարկամութիւնք:

Արդարեւ եթէ անդամաց միոյն մարմինն որ եւ է մասն թեթեւապէս բերեմք կամ մազերուն վրայ փափկապէս փչեմք, խիոյն համապատասխանող մասերն ուժգնապէս կը կարկամին:

Յառաջ բերեալ այս կարկամութիւնն անհետացնելու համար բաւական չէ միայն մկանները շաղկել (malaxer) այլ նախնական կէտին վրայ միւս անգամ նոր զրգուում մը ընել, եւ մերթ հակառակ անդամը զրգուել, օրինակ իմն, եթէ անդամոյ առջեւի մասը կարկամ է, պէտք է միեւնոյն անդամոյ ետեւի մասն թրել (petrir), եւ մերթ մարմն միայն կամ որ եւ է ուրիշ կէտ մը, զոր պէտք է խարխալմամբ որոնել:

Ուշաբարձութիւնը կրնամք անջատելով, մարմնոյն մէկ կիսոյն վրայ յառաջ բերել, եւ սոյն նպատակին հասնելու համար բաւ է քնաթմբութեան մէջ գտնուող ենթակային աչաց մի բանալ եւ խիոյն համապատասխանող կողմը կիսաշարժութեան (hémicatalépsie), եւ կամ ուշաբարձութեան մէջ գտնուող անձին աչաց մի փակել եւ միեւնոյն կողմի կիսաքնաթմբութիւնն յառաջ բերել (hémiléthargie): Այս անջատման փորձերն երբ առաջին անգամ լինին, պէտք է ենթակային աչքը մատով գոց կամ բաց պահել մինչ ցվերք գործողութեան: այսու հանդերձ ինչ ժամանակէ յետոյ ենթակայն բաւականապէս սովորած ըլլալով կրնամք սոյն եղանակը զանց առնել:

Ուշաբարձեալ կողմի անդամք անսահմանապէս իրենց դիրքը կը պահեն, մինչդեռ քնաթմբալ կողմի անդամք ջլատ եւ թոյլ կ'ընան: Այս արդիւնքներն աւելի զգալի կ'ըլլան, երբ հետեւեալ փորձը ընեմք:

Քնաթմբեալ ենթակային ձեռքը կը յանձնուի իւր ամենօրեայ գործը (զուլայ կամ կեռասեղ), որ կսկսի բանիլ իբր թէ արթուն ըլլար, եւ միեւնոյն ժամանակ ձախ աչքը, օրինակի աղաղաւ փակելով կը տեսնեմք թէ տակաւ առ տակաւ համապատասխանող կողմի բազիլ եւ ձեռաց շարժումներն կը զաւարին, մինչդեռ աջ ձեռքը կը շարունակէ միայնակ իւր շարժումներն: Աւելորդ է յարել որ, մագնիտի միջոցաւ թէ կիսաքնաթմբութեան եւ թէ կիսաշարժութեան

թեան շրջման երեւոյթներն նաեւ կրնամք յառաջ բերել միայն զարմանալին այն է թէ մարմնի մակերեւութային զրգումանէ ծնեալ կարկամութիւնք այս երեւոյթը չեն ներկայացներ:

Ուշաբարձութիւնն կը գաղթեցնեմք աչաց վրայ «*թէ*» փչելով. ենթակայն կը զարթնու առնային ինչ մոռացած:

Քանի մը բացառիկ պարագայներու մէջ փչումն որքան ալ սաստիկ ըլլայ, բաւական չէ սխալեցնելու ենթակայն: յայնժամ պարտ է քնեական վիճակը փոխել, այսինքն քնաթմբութեան կամ քնաշրջութեան վերածել աչաց վրայ թեթեւապէս փչելով:

Եթէ ուշաբարձութիւնն առաջնական է, այս եղանակը քնաթմբութիւն կը ծնի, իսկ եթէ երկրորդական է, քնաշրջութիւն յառաջ կը բերէ:

Արդ ջանացի ըստ բաւականին բացատրել աղնիւ ընթերցողաց թէ ուշաբարձութեան անուամբ կ'իմանայինք քնեական երկր վիճակաց մին յորում ենթակայն անսահմանապէս կը պահէ իրեն տրուած որ եւ է դիրք:

Այժմ պիտի տեսնեմք թէ ենթակային զիմաց վրայ նշաններու եւ կեցուածքներու ունեցած ազդեցութիւնն առաւել եւս զայ մանալի է: օրինակի աղաղաւ, եթէ ենթակային ձեռաց մին իւր բերանին մօտեցնեմք իբր թէ համբար մը յղել ուղիք, խիոյն նորա ծիծաղելն պիտի նշարեմք: Եթէ նա յափշտակման դիրքն տամք, երկու բազուկներն վերամբառնալով, աչքերը դէպ ի երկինք կ'ուղիէ երանութեան կերպարանք առնելով: Եթէ բազկաց մին դէպ յառաջ երկնցնելով կուտիւր գոցեմք, անմիջապէս յօնքերը կը պոստէ եւ երեսը քննու եւ ամբողջութեան զիւրոյ գտնուայ: Սոյն օրինակ յուշարարութիւններն կրնամք յանձնու բազմապատկել եւ այլ եւ այլ կեցուածքներով գոռուութեան, խոնարհութեան եւ աղաչանաց արտայայտութիւնք յառաջ բերել երեսաց վրայ:

Ըստ Պրէտի կարծեաց, մեր նախնիք կարիչներն եւ արձանագործերն անմահացած են իրենց հրաշակերտներուն շինութեան համար այս միջոցներուն զիմեղով: Մասնական զգայարանք որոց համար ըսինք թէ քիչ շատ անեղծ կը մնան, ուշաբարձութեան վիճակաւ փորձողի այլ եւ այլ ազդեցութեանց կրնան ենթարկուիլ: Եթէ ենթակային աչաց առջեւ որ եւ է առարկայ մը ձօճեցնեմք, ուշաբարձեալն աչքը կը հետեւի վերայիւնալ առարկային շարժումներուն, և եթէ զայն օդոյ մէջ ձօճեցնեմք, թռչնոյ պատիւր երեւոյթը կ'առնու, զոր ենթակայն ծիծաղերես կը ջանայ բռնել մերթ ընդ մերթ ձգելով:

Իսկ եթէ առարկայն դետի վրայ արագապէս շարժեմք, օձի պատրանք տեղի կ'ունենայ, եւ ենթակայն սարսափած լուսաբեր կը փորձէ փախուկներ արձակելով: Նոյն ազդի փորձերը կրնամք նաեւ կրկնել ուրիշ զգայարանաց վրայ եւ միշտ ուղեղը ընդունած զգայութիւններն երեսաց վրայ կը նկարուին աներկրայապէս: Գրգռուեմք զաղիւնէ յետոյ, ենթակայն միւսանգամ ուշաբարձութեան կը վերադառնայ:

Ուշաբարձական վիճակն ինքնաշարժութեան եւ ինքնարեքտական նմանողութեան տիպարն կրնայ ըլլալ, այնպէս որ ենթակային վրայ քանի մը երկվայրկեան միայն որ եւ է կանոնաւոր եւ կռաւոր շարժումներ կատարելէ յետոյ (ծափահարութիւնք, թեք վեր վար շարժել, մատերն իրարու վրայ

լուրջանակի դարձնելն) թողումք ենթակային ինքնիրեն շարժումները կը շարունակէ անսահմանապէս կատարելի իսկ եթէ միեւնոյն ժամանակ մեր ձեռաց մին ենթակային առջեւէն արագ արագ անցունեմք, այս շարժումները գողցելով ուշադրութեամբ իւր նախնական դիրքը կ'ստանայ :

Եթէ փորձողն պահ մը ենթակային առջաց մէջ անընթիւ նայելէ յետոյ հեռանայ, յաճախ ուշադրութեամբ փորձողին կը հետեւի եւ ուր որ երթայ ինքն ալ դէպ անդր կը յառաջանայ . բայց եւ այնպէս երբ ձեռք վանելու ձեռք մը կատարեմք, ենթակային յետոյ յետոյ կ'ընկնի : Այս վերջին պարագային մէջ յայտ իսկ կ'երեւի թէ յուշարարութիւնն ուղեղին վրայ կարող է ներգործել մի միայն ձեռք եւ նշաններու արդէ տալիս, առանց բառ մը արտասանելու :

Ինքնաձին յուշարարութեանց (suggestions spontanées) մի նոր կարգ ալ կայ, որ ինքնաբերական շարժումներն (automatisme dimitation) պիտի կոչուի :

Այսինքն, երբ ենթակային դէմ առ դէմ կեցած, որ եւ է շարժում մը ընեմք, օրինակի տղազաւ լեզուն դուրս հանել, համարյոյ մը յղել, բազկաց մին վերամբառնալ, գլուխը շարժել, եւ այլն, ենթակային այս համարէն շարժումները պիտի կատարէ ամենայն ճշգրտութեամբ, առանց փորձ պարտադարձ մը իսկ պանց առնելու :

Եթէ ենթակային ետեւէն սուլեմք կամ ծախահարեմք, իսկոյն միեւնոյնը պիտի կրկնէ :

Երեւոյն նաեւ անդրերէն, իտալերէն, գերմաներէն ամբողջ պարբերութիւններ կրկնել տալ . միայն եթէ ենթակային այս լեզուաց տեղեկի չէ, կը կրկնէ ինչպէս որ լսէ կամ կ'ըմբռնէ :

Յիշողութիւնն ալ կը ներկայացնէ մեզ ինքնաբերութեան այս հետաքրքիր երեւոյթն : Եթէ ենթակային ձեռքն այնպիսի առարկայ մը դուրս, որոյ գործածութիւնը կանխապէս գիտէ, իսկոյն այլ եւ այլ շարժումներ կը կատարէ, որք առարկային գործածութեան հետ անմիջական յարաբերութիւն ունին : Այս պէս եթէ դաւաթ մը տամք, շրթանցն կը մօտեցնէ, եթէ դանակ եւ հացի կտոր մը տամք, դանակով հացը կը կտրէ . եթէ բեղւոր մը, գլխիկ մը երկնցնենք, գլխոյն վրայ կը դնէ, եթէ գրիչ մը տամք, գրելու շարժումներ կը կատարէ, վերջապէս գուլպայ մը տամք առաւել ճշգրտութեամբ եւ արագութեամբ կը բանի բան թէ արթուն վիճակի մէջ :

Այս փորձերն կրնամք անթիւ եւ անհամար կերպով բազմապատկել եւ ամեն անգամ միեւնոյն արդիւնքները կը ստանամք : Երբ փորձողն այս ինքնաձին յուշարարութիւնը կը գողցնէ ենթակային ձեռքաց առարկայն խլելով, իսկոյն ուշադրութեամբ իւր նախնական արձանացեալ դիրքն կը ստանայ վերստին :

Մասնական զգայարանաց անարատ մը նախնական արդեամբ, խիստ դիւրութեամբ ենթակային հետ հաղորդակցութեան մէջ կը մտնեմք, բաւ է ականջին մօտ բիշ շատ բարձրաձայն խօսիլ :

Սակայն երբեմն լսել տալու համար պէտք կ'ըլլայ աչաց անշարժութիւնն անհետացնել (աչաց առջեւ որ եւ է առարկայ մը ձօնեցնելով) եւ յայնժամ կրնամք այլ եւ այլ յուշարարութեանց միջոցաւ ամեն ազգի պատարանք (illusion), ցնորք

(hallucination), անդամալուծութիւնք, կարկամութիւնք, յուշարարութեամբ արթնութիւն, բազում անդիտակից գործողութիւնք, անընդդիմակելի գաղափարներ յառաջ բերել : Այս վիճակին մէջ ենթակային ուղեւալ հարցմանց ոչ միայն լիովին պատասխան կ'ընողութիւնք, այլ յաճախ մասնական զգայարանաց կողմանէ գերզգայութիւն (hypéresthésie) մը եւեթ կը նշմարեմք :

Առ այժմ վերոյիշեալ երեւութից անուններն միայն թուելով շատացայ, բայց եւ այնպէս կը խոստանամ ազնիւ ընթերցողաց ընաչքութեան հետ նկարագրել նոցա մանրամասնութիւններն, որոյ պիտի յանգիմ յաջորդ յօդուածով :

ՏՕԳԻ. ՊՕԳՈՍ ԷՄԻՐՁԷ

ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՄԱՅՈՒՍՆ

ԳԱՐՐԻԷԼ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԱՅՎԱՋԵԱՆ

Հանգիստ շերմիք,

Հանգիստ ուրբեքնուրբ...

Մինչ արեւայ, երիտասարդ վառվառն, Գրեցիր ուռաց և օտանեան պատմութիւն, Կորովմալա խորենացայ հայեացքով եւ Եղիշայ գողցարիկ լեզուով և ոճով :

Ապա դու ես պերճաբան

Քաջ և ներհուն պատմաբան :

Քերթողահօր աշխարհգրութեան կեանք տուիր,

Գծելով բարոյէտ երկրին Հայոց մեծադիր .

Դու և առաջ աշխարհգրութեան ընդհանուր

Պատրաստեցիր հայ տառերով հեշտալուր :

Ուրեմն ես հայրենագէտ

Եւ հմուտ աշխարհագէտ :

Մեծ դասախօսէիր դու սուրբ Ղազարու մէջ՝ Մուրատեան վարժարանին Պարիսում, Բացար դպրոցը դու «Հայկազեան» «Խալիբան», Կարգադրեցիր «Սուրբ Գէորգեան» ձեռնարան :

Դու սիրահար վարժատան

Եւ մանկավարժ բրտնաջան :

Դու Վենետիկ, Թէրեոսիա եւ Պարիս ճօխ «Բազմալէզ» կրկին «Մասեաց Սղաւնի» Պատկերադարձ ամսագիրներն հանեցիր եւ ազգի մէջ ազնիւ մտքեր ցանեցիր :

Դու խմբագիր լրջամիտ,

Սերմանացան նրբամիտ :

Դու Յանոսի խալերէն լուրջ գիրքը եւ Կրիլովի հիանալի առակքը

Այնպէս սիրուն թարգմանեցիր հայերէն,

Որ ընթերցողը զայնս բռնագիր կը կարծեն :

Դու թարգմանիչ հայկաբան

Եւ լեզուագէտ գիտնական :

Դու գրեցիր և Ստոնաժարանութիւն, Բառազնութիւն, բոլորաց պատմութիւն,

Շարադրեցիր կրօնի լեզուի դասագիրք

Մշակեցիր «Հայկազեան» մեծ բառագիրք :

Դու ես և Ստոնաժարան

Մշակ լեզուի գննական :

Նախ թեմակալ Բեսարարիոյ կարգեցար,

Երկսեռ դպրոցը ամենուրեք դու բացար,

Հուսկ դու հովիւ եղար թեմին Վրաստանի, Ուր, ինչպէս միշտ, անրիժ պաշտօն վարեցիր :

Արթուն, բարի՝ վարդապետ, Հայրախնամ հօտապետ :

Այլ դառն ժպտով մերժեց որդիդ գանձդ անբաւ,

Անյագ հողը կայքիդ ժառանգ, տէր դարձաւ .

Դու շինեցիր՝ նա կործանեց վատաբար,

Դու տնկեցիր՝ նա չորացրեց անդադար...

Շիրիմ, քանի՜ թանկագին

Գոհարք ծոցումդ կը ծածկուին :

Փոթորկալից, հոգաւոր բո կեանքը

Աղմուկ հանեց, սթապիցրեց հայ ազգը,

Յուզեց ոմանց կրքեր, նախանձ, ամբաստանք,

Որք վաղժամ զբեղ իջուցին դերեւման :

Դու լուր, մուշ, ածիւնացած՝

Դեռ սեւ նախանձն չէ հանգչած...

Թէեւ մեռած՝ դու միշտ կ'մնաս կենդանի . Կ'անցնին դարեր, մաշող տարեք և մարդիկ ջեն, չեն կարող ջնջել անմահ յիշատակդ . Գանի հնանստ՝ այնքան կ'մեծնաս, ով մեծ մարդ :

Ի՞նչ պէտք բեղ արձան, կոթող,

Մինչ դորժերդ եւ միշտ խօսող :

«Աղբա՛ն ծընար, ցաւալի կեանք անցուցիր, Քաջ նաւալար՝ նաւակդ էր միշտ ալէկոծ...»

Գիշեր-ցերեկ ազգիդ համար գործեցիր, Չգնահատուած սեւ հող իջար վշտակոծ...

Ահա՛ ինչ տապաւնագիր

Վճռեց բեղ ճակատագիր :

Քոյ աշակերտք, Հայր, թէեւ ուշ, գան այսօր

Համբուրել քոյ շիրիմ, թափել զոյգ արտօսք, Եւ քոյ ճակատ, յոգնած, խոնջած ծերունի,

Պըսակել այս պարզ պըսակով՝ դափնի :

Քե՛զ, բեղ հանգիստ յաւիտեան

Հայր Գարրիէլ Այվազեան :

ԳՈՂԹՆԵՅԻ

ԲԻԻԶԱՆԴԻՆՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

ՎԱՍԻԼ ԿԱՅՍԻ ՀԱՅԿԱՋՆ

Վարդ-կեսար արդէն վաղուց կը նախատեսէր թէ Վասիլ մի օր վերջապէս կայսր պիտի ընտրուի ամենէն, մանաւանդ թէ Լեւոն անուն իշխան մ'ըսած էր իրեն թէ «Երիտասարդի մը միջոցաւ պիտի կործանի ձեր ցեղն» : Այդ պահուն ներկայ լինելով Լեւոն կը մօտենայ Վարդին եւ կ'ըսէ Վասիլը ցոյց տալով մատափ . «Վասիլ, այն երիտասարդն» : Այսուհետեւ Վարդ կասկածով կը նայէր Վասիլին, եւ դաւաճանութեան հնարներ ի գործ դրաւ ընդդէմ Վասիլի, այլ չը յաջողեցաւ : Միւս կողմէ Վասիլ երթալով կը մեծնար եւ աւելի եւս սիրելի կը դառնար կայսր, մինչեւ այն աստիճան որ նոյն իսկ արքունեաց մէջ շատեր կըսէին իրարու թէ այնուհետեւ մօտ է Միւս քայլի կայսրութեան վախճանն եւ նմա յաջորդելու է հայկազեան ցեղի կայսրութիւնը : Սոյն միջոցին կայսր սենեկապանը Գոմիանոս Սկլաւոնացի, շատ զեղծումներ

նկատելով Վարդ Կեսարի պաշտօնավարութեան մէջ կ'ամբաստանէ զնա կայսերմաս Վարդ իմանալով այս բանն իւր մտերիմներու ընկերակցութեամբ ծանր ամբաստանութիւններ կընէ կայսեր Կամիանոսի մասին, որ պատճառաւ Դամիանոս պատիւէն կ'ընկնի եւ նորա փոխանակ կայսրը սենեկապան կը նշանակէ իւր սիրելի Վասիլը եւ նմա կնութեան կառնու Եւգլորոս մեծ պատուրիկի զուտորց Վարդ բնականաբար աւելի գովաբանեցաւ այս նոր կարգադրութեան համար եւ ըսաւ իւր խորհրդակիցներուն զինչպէ՞ս անխոհեմ գտնուեցայ, ինչո՞ւ զուրս վաւերել տուի ազուէսն եւ նորա տեղ մտցուցի ամենի առիւծն, որ մեզ ամենապէս կարող է պատառել եւ կլանել: Այս գէշպէն ընչ ժամանակ յետոյ Վարդ խորհեցաւ դաւաճանել կայսրն եւ ինքզինքը կայսր հռչակել Սակայն կայսրը իմանալով Վարդ Կեսարի այս դաւաճանական խորհուրդն, որոշեց լռելեայն սպանել զնա եւ իւր այս գիտաւորութիւնը յայտնեց Սիւրապոսի Մեծ իշխանին որ արքունեաց հազարապետ էր եւ Կեսարի ալ փեսան: Մի անգամ կայսրը հեռու տեղ գնացած լինելով, երբ վրանի տակ նստած էր Վարդ գործի մը համար նորա մօտ կուգայ այդ միջոցին կայսրը կ'ակնարկէ Սիւրապոսն որ դուրս ելնէ եւ զինուորներ ներս մտցնէ: Սիւրապոս իսկոյն կը կատարէ կայսեր հրամանն եւ կըսէ զինուորացի, զերբ երեսն խաչակնքեմ ներս մտնեն, սակայն Սիւրապոս նշան տուած ժամանակ զինուորները ներս չմտան վախէն: Վասիլ տեղեկանալով Սիւրապոսի ազդարարութեան կուգայ եւ սիրտ կուտայ զինուորացի եւ նոցա հետ միասին ներս մտնելով կը բռնէ զՎարդ Կեսար եւ երբ կայսր կը հրամայէ սպաննել զՎարդ, իսկոյն կ'ալաննեն կայսեր ոտքի տակ:

Այնուհետեւ Միքայէլ կայսրն աւելի եւս պատիւներով փառաւորեց զՎասիլ եւ որդի չունենալուն պատճառաւ որդեգրեց զնա եւ գլխաւոր Մագիստրոսի աստիճան շնորհեց նմա: Սիւրապոս սաստիկ կը նախանձէր Վասիլի այս մեծութեան համար եւ հալու մօտ կը լինէր, մինչ այն աստիճան որ հրաժարելով իւր պաշտօնէն քաղաքացի դաւաճական քաղաք մը բռնալծութեան պաշտօնով: Կայսեր գահակցի — Վարդ Կեսարի — սպանումէն յետոյ սկսաւ չփութութիւն արել կայսրութեան մէջ, որովհետեւ կայսրը շատ անյաջող էր կառավարչական գործոց մէջ եւ ամեն ոք զժգոհ էր այդ մասին: Այս նկատումներով ինք Միքայէլ կայսրն եւս կուզէր գահակցի մ'ունենալ եւ Վասիլի չափ արժանաւոր մարդ ոչ որ գտաւ այդ բարձրագոյն պաշտօնի համար, մանաւանդ որ Վասիլ արդէն շատ պարագայներու մէջ ցոյց տուած էր իւր իմաստութիւնն եւ կառավարական հանձնարը: Աստի 866 թուի Պենտէկոստէի տօնի օրն Այս-Սոփիայի հոյակապ տաճարի մէջ ինքն Միքայէլ կայսրը առնելով կայսերական թագը իւր իսկ ձեռքով դրաւ Վասիլի զըլուխն եւ իւր գահակցի անուանեց: Սըմբատ հայկազն իմանալով այս խորագին խոցուեցաւ եւ ալ չկարենալով զիմանալ միաբանեցաւ Պեղան անուն յոյն իշխանի հետ եւ սկսաւ ամեն ուրեք նախատել Վասիլն եւ յայտարարել թէ, մենք հարազատ կայսր կը ճանաչենք զՄիքայէլ միայն: Նախանձն այն աստիճանի էր որ իւր հետ միացնելով բազմաթիւ զօրքեր եկաւ Կ Պոլսոյ շրջակայքն աւերեցին եւ այրեցին շատ ազարակներ ու անդեր եւ ապա վերադառնա-

լով ամրացան անառիկ տեղեր: Կայսերական զօրքերը յարձակելով զնստ վրայ բռնեցին ամենն եւ չլքալսալալ բերն կայսերական պալատն, ուր Միքայէլ կայսրը չարաչար գանակած էր տուաւ նոցա յետոյ հրամայեց փորել Սիւրապոսի երկու աչքերն եւ կտրել ձեռքն մի գատակը: Կայսեր հրամանի գործադրումէն յետոյ Սիւրապոս արքայաւորացաւ: Նմանօրինակ պատիժ կրեց եւ Պեղան բաց աստի եւ սորա բիթն եւս կտրել հրամայուեցաւ: Շատ աստիներ յետոյ, երբ Վասիլ կայսրութեան միահեծան տէրն եղաւ արքայաւորէ գործուց զնստ եւ ջանաց ըստ փոխել մասնաւոր սոճիկ կապելով նոցա: Թէեւ նոքա մեղանշած էին Վասիլի զէմ եւ ոչ Միքայէլ կայսեր, բայց Վասիլ որ ի սկզբանէ ներսըմտ էր եւ բարեւորութեւ համաձայնար ներեց իւր անձի օժանդակութեամբ:

Միքայէլ կայսրն երթալով սկսած էր ինք զինք տալ անառիկութեան եւ չարաւորութեան, այնպէս որ արքունի գանձը գատարկուած էր բոլորովին: Բաց աստի Միքայէլ իւր այդ մոլութեանց հետ մեկտեղ ստացած էր անողորմ եւ անզուլ բնութիւն: արքայութեան միջոցին հրաման չկուտար մին գլխատել միւսն կուրցնել: Երրորդի ձեռքն կամ ոտքը կտրել եւ չարքը կամաց կամաց կտրէր ծաւալել համայն կայսրութեան մէջ: շատ խոհուն մարդիկ տեսնելով զան հետեւանքը խորհուրդ կուտային Միքայէլ կայսեր հրաժարի իւր շարագործութենէն: Նա ոչ ոքի տկանջ կը զնէր: Վասիլ եւս իւր բարեացակամ շատ անգամ կը խրատէր եւ այն աստիճանի հասաւ որ նոյն իսկ սկսաւ յանդիմանել կայսրը զայրաւարելով Վասիլի այսպիսի վարմունքի համար խորհեցաւ գաղտնաբար սպաննել զնա: սակայն տակաւին իւր գիտաւորութեան շնորհակամ Յուսէպ մեծամեծները Վասիլի հետ միասին մտան կայսեր նշնարանն եւ սպաննեցին զնա անկողնի մէջ: հազիւ արշալոյսը ծագած էր երբ արդէն քաղաքի այլ եւ այլ կողմերն ուրախութեամբ կը գոչէին: Կեցցէ զի Գէրն — Ենթակալն Վասիլ 867ին էր որ տեղի կունենար այս զէպքն: միւսնոյն առաւօտ Վասիլ համայն ժողովրդի հրաւիրմամբ գնաց բազմեցաւ կայսերական գահի վրայ: Այնուհետեւ մի քանի օր շարունակ մեծ ուրախութիւն կը տրէր ամբողջ Կ Պոլսոյ մէջ, որովհետեւ ամենէն սիրուած էր Վասիլ իւր ընտիր բարեմասնութեան պատճառաւ:

Վասիլ կայսերական գահը բարձրանալուն պէս նախ եւ առաջ բնաջինջ բրաւ այն ամեն անկարգութիւններն որոցմով ապականուած էր բովանդակ կայսրութիւնն, բնաջինջ բրաւ նմանապէս մեծամեծներու անողորմ բռնութիւնն որ կը գործադրուէր հպատակ ժողովրդի վրայ: Գաղթեցուց բազմաթիւներու խողովոյզ վէճերն եւ վաճառքի խորդախութիւններն, շատոց զորաց թիւն եւ առանձին առանձին գտնութեւն բաժնեց, վերջապէս կտրեւ կանոն դրաւ ամեն տեսակ բանի համար: Միով բանիւ հիմնովին վերանորոգեց բիւզանդական կայսրութիւնն ի նպատակ հպատակ ժողովրդեան եւ աչքութեան առ հասարակ: Ինքն անձամբ հետամուտ կը լինէր ամեն բան իմանալու, որպէս զի արդարութիւնն օտանակոյ չլինի երբեք: մասամբ նորոգեց եւ մասամբ հիմնովին շինեց հարկաւոր հոյակապ եկեղեցիներ եւ վանքեր, եւ այլ անթիւ բարիքներ մատոյց երկրին եւ առ հասարակ այն աստիճան ծաղկեցուց իւր-

գանդական կայսրութիւնն աշխարհական եւ եկեղեցական բարեկարգութիւններով, որ ժամանակակից եւ յետագայ բոլոր մատենագիրներն իրաւամբ գիտել կուտան թէ Յունաստան նորա նման կայսր մը մի երկու հատ հազիւ ունեցած է: Կատանդիոն Պեր, փեռութէն կայսրն պատմելով Վասիլի կենսագրութիւնն երբ կը հասնի նորա գահակալութեան կէտին, յատաջ կը բերէ Սահակ Պարթեւի տեւիլն, որով Սահակ Պարթեւ կը նախատեսէր Արշակունեաց ցեղէն պիտի ելնէ թագաւոր մը: Պերթեւութէն այդ տեսիլն կատարուած կը համարէ Վասիլ Արշակունի թագաւորութեամբ, ըսելով: Կատարեցաւ ահա այն մարգարէական գուշակութիւնն եւ պատգամն զոր աւանդած էր Մեծն Սահակ . . . :

Վասիլ միահամուռ հաւանութեամբ եւ խնդակցութեամբ բիւզանդական գահը բարձրանալէ յետոյ, տեղեկանալով Նիկիոյ Հայոց Վահան անուն եպիսկոպոսէն թէ Բագրատունեաց ցեղն Արշակունեաց թագաւորներու թագադիրն էր, Նիկիոսոս անուն մարդ մը կը զրկէ Մեծ Աշոտ Բագրատունիին շատ պարգեւներով եւ կը խնդրէ անկէ արքայական թագ ընդունիլ: Աշոտ Բագրատունիին իսկոյն կը զրկէ շատ փառաւոր թագ մը, որով Վասիլ կրկին անգամ կը պատկուի կայսր Բիւզանդիոյ: Այնուհետեւ Վասիլ մեծ սէր եւ համակրութիւն ցոյց տուաւ հայ ազգի եւ մասնաւորապէս Աշոտի նկատմամբ, որ հետ սիրոյ եւ բարեկամութեան զաշն կապեց, ինքն եւս փոխարինարար զրկելով նմա արքայական թագ:

Վասիլի պատմութեան այս պարագայներն զրոյց է Վարդան պատմագիրն եւ առաւելագէտ Շապուհ Բագրատունին որ ականատես վկայ եղած է այդ անգամ:

Վասիլ Բիւզանդիոյ ժամանակոյն եւ ստամոսէր կայսրներէն մին կը համարուի ունի ընտիր գրաւածներ, որպէս է իւր Գէրն Սթեփանոս ընտիր գործն բաժնուած վաթսուս եւ վեց համարօտ զլուսնեբու: Յօրինել տուաւ յունաց Այսաւարքն, տեղեկութիւնները քաղելով ստոյգ պատմութիւններէ: Վերջապէս նա հաստատեց առանձին օրէնքներ որ կը կոչուին Օրէնք Վասիլ: Վասիլ առաւել եւս նշանաւոր հանդիսացաւ իւր պատերազմական յաղթութիւններով, որոց մէջ շատ անգամ ցոյց տուած է զիւցաղնական բազմութիւններ: մասնաւորապէս մեծամեծ յաղթութիւններ տարաւ Արաբացոց դէմ: Վասիլի հրամանաւ եւ ներկայութեամբ տեղի ունեցաւ Կ Պոլսոյ մէջ հարիւր երկու հարապետաց գումարումն որ կը կոչուի ութերորդ ընդ հանոր ժողով: Այն ժողովոյ որոշմամբ գահընկէց եղաւ Փոտ պատրիարքն եւ արքայաւորացաւ կայսեր հրամանաւ, իսկ պատկերամարտերը վերստին յաղթուեցան: Փոտ աստիկ տառապանք կրելով իւր արքայաւորայքի մէջ երկար ժամանակ կը խորհէր ազատուելու հնարք գտնել եւ վերջապէս յաջողեցաւ: ըստ աստիճան Գուրիթ Նիկիայի եւ Սիմոն Մագիստրոսի, որ հետեւեալ կերպիւ կը պատմեն Փոտի խորամանկութիւնն: Կը շարադրէ գիրք եւ կը կեղծէ զայն իւր գաղտնիքով: Գրաւած մատենան մ'որ խալիլն ոճով եւ խորհրդաւոր խօսքերով կը գուշակէր Վասիլ կայսեր նախնեաց կեանքն, ցոյց տալով թէ Տրդատ թագաւորն ցեղէ պիտի յառաջանայ ձեւով մը որ ապա պիտի գաղթէ Բիւզանդիոն եւ այնտեղէն լիզրի աւաւազիս, ուր այդ տեղէն պիտի ծնիրորդի մը Վեկլաս անուն, եւ սոս պիտի բար-

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (4)

ԲՆԻՈՅԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

Ժ.

Պ. Մ. Թարվէզ Հանու մի գալը տեսնելով ոտքի կ'ելնէ, ու անհամբեր բժշկական գործողութեանց սկսիլ կ'ստիպուի։ Բայց Թարվէզ Հանու մի բոլորովին նորա անկախութեան հակառակ, կ'առաջարկէ բոլորն ալ դուրս հանել, միայն զինքն եւ հիւանդն առանձին թողնել, թէ ոչ Բէլէմը չ'ներգործեր։

Պ. Մկրտչի հետաքրքրութեան հետ մըտածումը կը շատնայ, երբ Թարվէզ Հանու մի կողմէ այսպէս առաջարկութիւն մը կը լսէ։ Սակայն ինչ ընէ, քանի որ հակառակն ընել փնտրել կը կարծուի, անմիջապէս կ'ընդունի նորա առաջարկութիւնը։

Թարվէզ Հանու մի երբ կը տեսնէ որ իւր հրամանը գործադրուած է եւ ոչ ոք չ'կայ զինքն դիտող, նախապէս բերել տուած կըրակի վրայ կը ձգէ այն ծխելիքներն՝ որոնք իւր բժշկական գործունէութեան էին։ Զրոյ լիք սըղընձէ թափն՝ իւր առջեւ կ'առնէ, քանոնածեւ փայտով նորա պոկին կը զարնէ, զանազան անուանելով կուտայ, զեւերը կը հրաւրէ, կը բրտնի, կը տաղադար, սուր անկողնի ձեւը բռնած է ինքզինքն զեւերի դէմ սրով պաշտպանելու, բայց ի վեր է իւր այս բոլոր աշխատանքը. պարտապաշտ ցանցի նման գետին փռած է այն Բէլէմը ու մեծաքանակ Բէլէմն՝ որպէս թէ անտանտները երեւան գալուն զանոք ի մի հիւսնելով՝ բար հանդոյց կ'ապեր պիտի ընէր անոնց վրայ, զանոք կ'ապելու խորհրդով։ Թարվէզ Հանու մի զիտցած բոլոր վարպետութիւնն ջուրը կ'ընայ, այս անգամ իւր հրամանին ոչ գեւեր կը հանգանդին եւ ոչ սառանայները. կը բարկանայ, ջուրը կը թափէ, կրակի վրայ եղած ծխելիքները կը մեղմացնէ, Սիսակի աջ կողմէն կը նստի եւ ամենայն պաշտպանութիւն մը կ'սկսի հարձակումները զայն, որովհետեւ իւր մարմին մէջ կ'առնուի կը լցանայ այդ հիւանդութեան տեսակի մասին։

Իսկ Սիսակ որ անգական թանձր կապերու մը վրան քաշած, մինչեւ աչքեր ծածկելով անկողնին կը նայէր այդ տեսարանին վրայ, ոչ այն էր ծիծաղելի Թարվէզ Հանու մի այդ խեղճատախտութեան վերայ, եւ ոչ այն իւր ցաւի մասին մտածել։ Այսպէս իւր հիւանդութեան մէջ զազաւարային հակոտնեայ վիճակի մ'ալ տիրացաւ։ Ուստի Թարվէզ Հանու մի հետաքրքրութիւնն իրեն ալ նպատակին յարմար դրտաւ եւ ըսաւ. Այս, սիրելի Թարվէզ Հանու, գոյ որ այդքան շնորհներով լի ես եւ չեմ կրնար հասնել ցաւիս տեսակին, ես ինչպէս կրնամ դիտեալ։

Տղա՛ս, այդ ինչ բան է, միթէ ես մարդաբէ՛ եմ, իմ գիտցածն ալ պարզ բան մ'է, քանի մը Բիւրսիւսներ եւ մէկ քանի Բանուսներ տալով ապրուստ մը ճարել, ինչպէս կ'արելի է որ մէկն իւր գարտ շիրտնայ գիտեալ։ Խնդրեմ, յայտնեցէ՛ք ինձ, ես որքան ըսի թէ բան մը չ'հասկցայ, սակայն գիտեալու էք որ այդպէս չէ, շատ բան ալ իմացայ. բայց չեմ ուզեր իմ ըսելով զձեզ անցնել. գուցէ յայտնեցէ՛ք ինձ ձեր միտքը եւ վստահ եղէք որ քոյդ Մամիկ Թարվէզն՝

ըստ ամենայնի զաղտնապահ պիտի մնայ քեզ, ու իւր ձեռքէն եկած աջակցութիւնը չ'պիտի խնայէ։

Հայաստանցի Մամիկներն իրենց փորձառութեամբ եւ հետաքրքրութեամբ իրօք շատ անգամ կը գործեն բժշկական այնպիսի հարաշններ, որ ամենէն ճարտար բժիշկները կը կասին նորա դէմը։ Այսպէս ահա՛ Թարվէզ Հանու մի, արդէն նախապէս թէեւ չ'ընէ մի իր անհիշին հասած էր Վիսակի եւ Սոսուհի մասին, սակայն այժման հետաքրքրութեամբ չէր անով, այդ վայրկեանին միտքը կուգայ այդ բանն ու կ'սկսի գործածել այս վերջին վարպետութիւնն որ իրօք կը համարուի ճիշդ կախարհութիւն։

ԺԱ.

Սիսակը դարձեալ մտածմանց եւ երթադրութեանց ուղիէն մէջը կը գտնէ ինքզինքը. Թարվէզ Հանու մի երկդ իմի հարցումներէն կը հետեւցնէ որ այդ կինը վհուկութեան ձեւով հասկցած է իւր գաղտնիք, հիմա կը տարակուսի պարզել զայն ու այս եղանակաւ՝ լռութեամբ կ'անցունէ քանի մը վայրկեան։

Թարվէզ Հանու մի տեսնելով Սիսակի լռութիւնը, կը հաստատուի իւր երթողական վհուկութեան մէջ՝ ու կը պնդէ խոստովանիլ։

Սիսակը կրկին լռութիւն կը պահէ։ Թարվէզ Հանու մի փայտայելով նորա ճակատն ու երեսը, պատմել կը խնդրէ։

Սիսակը գոյն տալէ եւ առնելէ ետք, ա՛յս, սիրելի Թարվէզ Հանու, ա՛յս դու անքաղ զիտես, էլ ինչ ասեմ...

Սոսուհի կը ճանչնայ։
Ինչպէս չէ, կ'ըսէ Սիսակ եւ կ'արձեւանի իւր անուանը լսելով ոյժ կ'առնէ։

Ինչպիսի աղջիկ է նա։
Միթէ ես կրնամ գնահատել նորա արժանիքը, հրեշտակէ մ'աւելի անմեղ եւ ազաւանի մը գեղեցկագոյն։

Երբեք առանձին գտած ես զինքը։

Այս, սիրելի Թարվէզ Հանու, այդ կէտն անցիր եւ մի նորոգել իմ ցաւերը. կան պատմութիւններ որ մարդը կը կենդանացնեն եւ կան ալ որ կենդանի կը խլեն. այդ հարցիդ ուղիղ պատասխանն՝ այս վերջնոյն տեսակէն է, կ'ըսէ Սիսակ ու կը մարի։

Թարվէզ Հանու մի շուտեւ տեղ ուրախութիւն մը կ'ըզայ, որ իւր վհուկութեան լաւ դեր խաղացած է եղեր, ուստի անմիջապէս բիշ մը պաղ ջուր Սիսակի ճակատին զարնելով ու քչիկ մ'ալ վառուած լաթի կտորով մ'անոր քթին ծուխ տալով կ'ըզաստացնէ զայն։ Սիսակ իւր աչքերը կը բանայ ու Թարվէզ Հանու մի անընդհատ նայելով անհամբեր բան մ'ուզողի պէս կը հայտնէ։

Թարվէզ Հանու մի իւր մեղադրանք մասնաւոր սնով սիրտ կուտայ Սիսակին, կը քաջալերէ զայն փոքր ինչ համբերութեան եւ մեծ կալութեան, երգ մամբ խոստանալով անոր իւր հիւանդութեան մէջ Սոսուհին իրեն այցելութեան բերել ու անոր խօսքերով ողջացնել զինքը։ Այս յայտնելով Թարվէզ Հանու մի Սիսակին ներշնչեց ետք, մնաս բարով ըսելու կը պատրաստուէր՝ երբ Սիսակը իւր յարգէ անկողնոյ յեցած՝ բռնեց նորա կախարհ ձեռքերը, համբուրեց եւ ըսաւ. Երթա՛ս բարով, իմ պատուական Թարվէզ Հանու. ինչ որ ընես, շուտ ընէ՛ եւ իմ կանաչ արեւուն գլխի, իմ անուշիկ Սոսուհին բարեւ արա՛ւ. պատմէ իմ վիճակն ի-

Պ. Տ.

բեն, ու յայտնէ թէ ինչ կը քաշեմ: Այս լակոնական խօսքերէն ետք աչքերն ար-
ցունքով կը լեցուին, գլուխը չոր բարձին
կը խոնարհեցնէ: Թարվէզ հանումը իւր
յուզութով լուրջներէն մաս մը հոն թողած,
մնացած գոյքերը կը հաւաքէ ու դուռը
բանալով դուրս կ'ելնէ, ուր Պ. Մկրտչն ու
իւր կին Նարգիզը՝ կայնած առաջինը բա-
րի խօսք մ'իսկ վերջինը՝ զոյգ մ'առնելու
անհամբերութեամբ:

Ինչ եղաւ, Թարվէզ հանում, ի՞նչ խա-
բար և բարի լուր . . .

Աստուծով բարի է և իմ աշխատութիւ-
նը կորուստ չպիտի երթայ. միայն թէ ի՞նչ
խրատ որ կուտամ ձեզ նորա մասին այնպէս
ընէք ու մի շարաթ չանցած Սիսակը քաջո-
ւորդ ոտքի կանգնած պիտի գտնէք:

Շնորհակալ եմ, Թարվէզ հանում, հրա-
մայեցէ՛ք ինչ որ կ'ամիս:

Սիսակի անկողինը պէտք է փոխադրէք
ձեր վերի մեղուանոցին կից եղող երեսա-
ցը՝ որ մաքուր օդ ու ազատ շունչ կրնայ
չնչել, չէք տեսներ որ հոս ողջ մարդը չը
դիմանար, խեղճ հիւանդն ի՞նչպէս ապրի.
Երկրորդ՝ բնաւ ելեւմուտ չպիտի անէք նո-
րա քով, ինչ որ պէտք լինի նմա՝ ես կու-
գամ կ'առնեմ, անոր այս հիւանդութիւնն
առանձնութիւն սիրող հիւանդութեանց
կարգէն է: Բայց հիմա քանի որ դեռ հոս
է, չուտ ներս մտի, Նարգիզ խաթուն,
այնտեղ շէր*) մը մէջ փոքրիկ բան մը կայ
կապուած կրակի վրայ ձգէ ու Սիսակի, ան-
կողնոյ վարի կողմէն ամբողջ մարմնոյն մուխ
տուր, երեք անգամ կրկնէ՝ «հարաթա, մա-
լաթա, սալաթա, դուք դեղ ու դարման լի-
նիք»:

Թարվէզ հանումը այս ձեւաբանութիւն-
ները կը գործածէր Պ. Մ. և իրեններն հա-
ւատացնելու թէ բան մը գիտէ: Պ. Մկրտչն
կը զարմանար և Նարգիզ խաթուն կը խոց-
ուէր, ուստի երբ Թարվէզ հանումի պատ-
ռիրած ծխելիքը նա կրակին ձգեց, անոր
տուած դասին հակառակ «հարաթա, մա-
լաթա, սալաթա, ո՛չ դեղ լինի ո՛չ դար-
ման, տարէք Սիսակն ի գերեզման», այն-
պէս իմն մրմնջեց որպէս թէ ցաւցած սըր-
տով լինէր, որ Սիսակը ըթի տակէն կը
խնդար՝ Թարվէզ հանումի ճիշդութեան
թեան և իւր մօրուի անմոռութեան վը-
րայ . . .

ԺԲ.

Պ. Մկրտչն Սիսակէն մէկ ու կէս տարու
մեծ աղջիկ մ'աւուներ իւր առաջին կին
հանգուցեալ Շուշանիկէն մնացած, որ կը
կոչուէր Գեղեցիկ. եւ Գեղեցիկն հազիւ
թէ 19 տարու ոտք կոխած եւ չորս տարի-
ներէ ի վեր իւր ամուսին, որ այնքան կա-
թօքին սիրով կը սերէր, պանդխտութեան
եւած էր Պոլսոյ կողմերն ու այդքան ժամա-
նակէ ի վեր իւր այդ հոգեհատոր ընկերէն
լուր մը կամ նամակ մը չառնելով գիշեր
ցերեկ կը մտածէր ու երբէք խնդութեան
նշոյլ մ'իւր դէմքին վրայ չէր փայլեր:

Գեղեցիկը լսելով իւր հարազատի հի-
ւանդութեան լուրը, հօր տունն եկած էր,
եղբոր վիճակը հարցնելու, եւ այն ժամուն
երբ Նարգիզ խաթունն իւր դասը կարդա-
լէն եւ ծխանելիքները կրակին վրայ ձգե-
լէն ետք դուրս կ'ելնէր Սիսակի պառկած
տեղէն՝ Գեղեցիկ Տիկինը ներս կը մտնէ ու
իւր սիրելի եղբոր այն զաւակահար վիճակը

տեսնելով ուշադրօրէն ցնորածի մը պէս նմա
կը փարի, կուշայ ու կը համարէ իւր մէկ
հատիկ եղբայրն եւ անընդհատ նորա վի-
ճակի մասին տեղեկութիւններ կը հարցնէ:

Սիսակն՝ որ երկրագունդիս վրայ իւր
առաջին մխիթարիչ եւ մտերիմ խորհրդա-
կանաց կարգը կը դադարէր իւր քոյր Գեղե-
ցիկը, որքան ուրախութիւն գինը պատեց
այդ վշտաց անկողնոյ մէջ, երբ հարազատ
եւ սիրելի քրոջ մը ներկայութիւնը վայելեց,
քրոջ մը, որ իւր որբ եւ անմայր մնացած
ժամանակին նորա խնամքը շատ գիշերներ
ննջած եւ ցերեկներ անսայթաք ապրած,
քրոջ, մ'որ եթէ կարելի լինէր եւ հնար՝
ինչպէս կ'ըսեն մեր գիւղացիները՝ իւր հո-
գին իւր մէկ հատիկ եղբոր հէգույն փոխ
կուտար: Ահա՛ այսպիսի ընտիր բարեմաս-
նութեան տէր քոյր մ'ինչպէս կարելի է չը
սիրել, չհամակրել և չգործուրաւ նորս վը-
րայ: Սիսակ ուրախութեան ինքզինք կը
մոգնայ. սրտի տարօրինակ յուզմամբ մը Գե-
ղեցիկին կը նայի:

Գեղեցիկը շատ կը հարցնէ ու կը փըն-
տըռէ այդ հիւանդութեան պատճառը. —
Կերպով մ'երբ կ'իմանայ անոր Պոստնին
զարնուիլը, կը խոցուի որ իւր եղբայրն, իւր
միակ յոյս եւ ապուշն Սիսակն, որպէս
կ'ըսէր նմա՝ կը գտնուի մի այնպիսի վի-
ճակի մէջ՝ յորմէ շատ կը խորշր ինքն իւր
վեհանձն առաքինութեամբ: Սակայն ան-
կեղծ սէրն զոր կը տածէր իւր եղբոր նը-
կատմամբ կը մոռցնէ իրեն ամեն բան.
փորձառու եւ գործադուր մօր մը նման
իւր կողմէ այսպէս կը բաջալերէ զնա:

—Սիրելիք իմ Սիսակ, երբ դեռ մանուկ
էինք եւ դժբախտ ճակատագրի բերմամբ
իրենց սիրատուն մայրը կորսնցնող կաքաւի
ձագուկներին նման անխնամ մայրական խը-
նամբներէ՝ խաղալը եղած էինք բախտի
ձախող հոսանաց, երբ մէկերուս ցաւ մը
պատճառուէր մենք էինք մէկ մէկու մխի-
թար, դու էիր որ քոյ անուշ ձայնով եր-
բեմն կ'երգէիր «ուր ես մայր իմ քաղցր և
անուշ նաղելիս եւ ես դիմութեամբ քոյ հը-
րեշտակային ձայնէն եւ երգիդ սրտազեղ
բառերէն փղծկած սրտով մը ունկնդիր կը
լինէի քեզ եւ դու, անմեղ թռչնոյ մը նը-
ման կ'երգէիր, կը խաղայիր եւ շատ ան-
գամ ալ մեր սիրելի մօր ժասին հարցում-
ներ կ'ընէիր ինձ ու ես իմ բոլոր վիշտերը
մեղմած կը նկատէի, քանի որ քեզ նման
բաղցրիկ եղբայր մ'ունէի: Կը յիշեմ ար-
դեօք այն օրն երբ անգամ մը Համբարձումն
տօնի գերեզման օրհնէքին հաց, դադա,
չամիչ, հաւկիթ, ևն. մաղի մէջ դրած
գիրկա առի և հողէ ամանի կտորի մը մէջ
ալ կրակ եւ խուսկ ձգուած քեզ տուի:
Դու իմ առջեւ անցար ու սկսանք զնալ
դէպ ի գերեզմանոց: Դուն դեռ եօթն ու
կէս տարու անմեղ գառնուկի մը կը նմա-
նէիր ու ինձի հետաքրքրութեամբ կը հար-
ցնէիր. «ուր կ'երթանք, Գեղեցիկ» երբ ես
ըսի թէ մեր մօր տուն կ'երթանք, այսօր
զինք պիտի տեսնենք, այս հացն ու պաշա-
րը հոն պէտք են. դու որքան ուրախա-
ցար եւ ինչպէս անուշ անուշ կը խօսէիր
ու կ'ըսէիր աճապարենք շուտ երթալ, հիմա
մեզի կ'պառէ մեր մայրիկ, ախ երբ պի-
տի տեսնեմ զինքը, համբուրեմ նորա ձեռ-
քը ու պատմեմ իրեն շատ բաներ, երթանք
Գեղեցիկ, երթանք կ'ըսէիր միշտ . . .
Գարուն էր եւ մայիսի ամենագեղեցիկ օ-
րերէն մին, բնութիւնը նորութիւն եւ վե-
հութիւն մը զգեցած էր: Մեր գերեզմա-
նոցը փառազարդուած էր ծաղկած ու

թիւած ծառերով փթեցած ու զարգացած
ծաղիկներով ու կանանչներով: Սիրակարօտ
թռչնոց մեղմաղճոտ մեղեդիները՝ գերեզ-
մաններն օրհնող Տէր Հօր «ընդ հոգւոց
կատարելոց» եւ տխուր շարականի հետ՝ մեր
զրացի նոր ննջեցեալ կարիճ Սարգիսի դըժ-
բախտ մօր ողբն ու կոծը, միւս կողմէ պա-
ռաւերի և մանուկների անտնոց՝ աւելն
գերեզմանի վրայ միացող խնկոց հոռի
հետ ինչպիսի տեսարան մը թէ ներկայէին
ճիշդ այն ատեն որ մենք մօր գերեզմանի
վրայ գնացինք՝ որոյ տապաւնաբարի շուրջ
պատող նարգիզն ու շուշան ծաղիկները
նորաբողբօք բողբի ընձիւղներին հետ՝ գեղե-
ցիկ պսակի մը ձեռով կը պատէին զայն ու
դու դարձեալ միամիտ աղաւթի մը պէս
միշտ իմ երեսը նայելով «ուր տեղն ես մայ-
րիկ» կ'ըսէիր. ախ որքան յուզուեցայ ես և
ինչպէս խոցուեցաւ հոգիս, քանի որ բո-
ւափուկ սրտին կորստեան ցաւի ծանրու-
թիւնն զգացնել ստիպուած էի. ո՛վ դառ-
նութիւն. արդեօք այն ժամու նման սեւ
ժամ մը կարելի է երեւակայել հասարակ
մահկանացուի մ'երբ քեզ ասի թէ ահա՛
հոգիս, ահա՛ մեր մայրն այս սեւ քա-
րի ներքեւ թաղուած է յախտեանապէս.
Դա նորա գերեզման է, օրհնենք զինք, որ
պատճառ եղած է գործադուրութեամբ մեր
կենաց: Աւ դու երբ լսեցիր զայս, այնպէս
ծուար ու այն սուրբ քարին փարեցար, ու
երկուքս միասին լացինք որբ սրտով մը՝ մեր
սիրելի մօր վրայ. սիրելիք իմ Սիսակ, այ-
սօր բու հիւանդութեան այդ անկողնոյ մէջ
զքեզ տեսնելով՝ այն ամեն յիշատակու-
թիւնը կը կենդանանան յիս ու մեր ման-
կական որբ կեանքի վիշտերէն աւելի ծա-
նրը, աւելի դժնդակ ցաւոց մէջ կը գտնե-
վա՛ր. դուն ես իմ բոլոր մխիթարութիւն,
բու երջանկութիւն իմ կեանքիս հիմն է,
ուրեմն ի՞նչպէս կրնայ այլ եւս կեանք ու
նենալ և լոյս տեսնել դժբախտ քոյրդ քա-
նի որ զքեզ բու նպատակին հասած չտես-
նէ: Վկայ թող լինի երկինք, և երեսմ
կ'ընեմ՝ բու զկանաչ արեւիս վրայ, որն որ
այնքան մեծ է իմ բով, եթէ այս մասին
կեանքս իսկ ուզելու լինին, սիրով պիտի
զոհեմ, մինչև դուք բու նպատակին հաս-
նիս. . . .

Այս տխուր եւ սրտամորմեց յիշա-
տակները քրքրելով Գեղեցիկը, նպատակ
ունէր համեմատութիւն մ'ընել իրենց ներ-
կայ և անցեալ կեանքին և անզգայօրէն
հասկցնել թէ «որքին օրը սեւ է» անբախ-
տութիւնն իրենց հետ մեծցած է և համբե-
րութեամբ հաւածական կը լինի նա:

(Շարունակ)

Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ՔԱՂՈՒԱԾ

Շ Ս. Ա. Ս. Ա. Ս. Ա. Ս. Ա. Ս. Ա. Ս. Ա. Ս.

Սեպտ. 12 էՆ 18

ԱՐՏԱՔԻՆ

Ձրանքօ-գերմանական սահմանադրոյն
վրայ վերջին օրերս միջադէպեր պատահե-
ցան, որք պահ մը երկիւղ տուին Գերմա-
նիոյ եւ Ձրանսոյի յարաբերութեանց խեղ-
ման, սակայն ամեն ինչ կարգադրեցաւ
խաղաղապէս: Միջադէպին գլխաւոր պատ-
ճառն էր Ֆրանսացի Տրալօններու տեղա-

*) Լաթ:

կալի մը սահմանադրւոյն մօտ գերմանացի մարտաւարներէ վերաւորուելն եւ Ֆրանսացի պաշտօնի մ'ալ ստաննուելն : Այլ խնդիրը կորուսած է այժմ իւր կարեւորութիւն , զէթ սկզբամբ , զի գերման կառավարութիւնը յաւ յայտնած է Ֆրանսական կառավարութեան , եւ պատրաստութիւն յուսած է ամեն գոհացում տալու , եթէ ապացուցուի գերման պաշտօններուն յանցանքը :

—Սիւէզի ջրանցը չէզոքացնելու խնդրոյն վրայ Թրանսայի եւ Անգլիոյ միջեւ բանակցութիւնը վերսկսած են , ըստ տակաւին յայտնի չէ թէ համաձայնութիւն մը պիտի կրնայ զայանալ Թայմին Բարիզի թղթակիցը կը հետագայէ թէ հաւանական անգլո-թրանսական համաձայնութեան նկատմամբ օտմ կայս. կառավարութեան այժմէն վերապահութիւն մ'ընելը զարմանք ազդեր է Սիւէզի ջրանցին յատկացնել ուղղուած 200 զօրաց պաշտօնը պիտի լինի եղեր ապահովութիւն տալ ջրանցին , եւ ոչ թէ աշտարակներ անոր չէզոքութիւնը : զի չէզոքութիւնը պիտի պիտի պաշտպանուի միջազգային համաձայնութեան մը ոյժով : Եթէ անգամ մը Անգլիոյ եւ Թրանսայի համաձայնին , յայտ կայ եղեր թէ միւս Տէրութիւնը ընդ պիտութիւն չեն ըներ , եւ գործը դիւրաւ կը ստանայ միջազգային հանգամանք :

—Ի Թրանսայ մաս մը լրագրիւր , երկուստեք եւ սեղանաւորը կը շարունակեն բոսնի պայքար մը Բանատայի ջրանցին դէմ , զոր Պ. Լէսէքսի անկրօնակի մէկ խորհուրդը կամ երազը կը համարին , եւ կը հաշտկեն թէ ցարգ վստահութեամբ միլիոնները ծովը թափուած դրամ են լոկ : Բայց ըստ Նորադայի լրոց , Պ. Լէսէքս ամենայն վրձնապահութեամբ կը սպասէ իւր այս մեծագոյն ձեռնարկութեան յաջող աւարտման , եւ նոյն իսկ ջրանցին պիտի աշխատութիւնը , որը անգուլ յառաջ կը տարուին , անյաղթելի արգելքի մը չին բախած ցայս փոքր :

—Զինատանի կառավարութիւնը 22 հոտ եւ լեզուագէտ Զինացիներու պաշտօն յանձնեց պարտիլ յետագա , ընկել երազեան Տէրութեանց քաղաքական , զինուորական եւ անտեսական վիճակներն , եւ ամեն բան մանրամասնօրէն տեղեկագրել Բեքինի կառավարութեան :

—Թրանսայի Արմատական Բարիզի կոմսին Յայտարարութեան վրայ , որով Հանրապետութիւնը տապալելու հրաւեր կը կարգադրէր Ֆրանսացի ժողովրդեան , կը պահանջէր որ Թրանսայի արտաքսութիւն Պոնաքարեան եւ Պաւլոնեան այն իշխանազուրկ եւս որոց ի Թրանսայ բնակութեան ընդունութիւն կը լինէր տակաւին :

—Գերմանիոյ զինուորական լրագրիւր , խօսելով Թրանսայի 17րդ զօրաբանակին շարժման մէջ դրուելուն վրայ , հակառակ ինչ ինչ թերութեանց , այս փորձն յաջողած կը գտնեն , եւ կ'ըսեն թէ Թրանսայի լինումը հետեւած են գերմանական մէթոններու , եւ 1870ի ազգայնական օգտուած :

—Նարուզնի Իլիան Եւրոպայի եւ իւր աղաքիչքն անուամբ գիրք մը հրատարակելով պատմաստեանց Ֆրանսացի իմաստասէր Պ. Գիէի Ուրվիւ տէ Տէւ Մօնա հանդիսին մէջ հրատարակած հակահարուցանական ուղարկու յոյնական :

—Վիէնայէ կը ծանուցուի թէ Քալնթըրի կոմսը խնդրէր է Պիլզնի Իլիանէն որ Գերմանիա հակառակ Ռուսիոյ զինուորական փորձողութեան ի Պոլկարիա , եւ Պիլզնի Իլիան հաւանէր է Ռիւի աղբիւրներէ տրուած տեղեկութիւնը եւս կը հաստատեն թէ Քալնթըրի կոմսը շատ գոհմանց ի Պիլզնի Իլիանին հետ իւր տեսակցութեան :

Ն Ե Ր Ք Ի Ն

Սպիտակ տախտակ տրուեցաւ Տիգրանակերտի երեւելիներէն Գուրգենեան Մեծ. Յակոբ էֆէնտի :

—Առեւտրական դատարանի առաջին սենեկին քարտուղա , անուանած է Մազ-

հար պէյ որ թուրք մամուլն մէջ ծանօթ է իւր գրական աշխատութիւններով :

—Մանսուրի իւր իւր կուսակալ Ալի Բէմալի փաշա մայրաքաղաքս եկաւ :

—Առեւտրական եւ հանրօգուտ շինութեանց նախարարութեան խորհրդականի օգնական անուանեցաւ Մարտիչ էֆէնտի Սինապեան :

—Ճարտի կայսեր հորեղբայր Քոնաձօ Իլիանին իւր կնոջ ու բազմաթիւ հետեւորդաց հետ մայրաքաղաքս եկաւ հինգ շաբթի օրն եւ ուղղակի կէօք-Սուլի պալատը զընաց որ անոնց բնակութեան յատկացուած է Իլիանին եւ Իլիանուհին Վեհ. Սուլթանի հիւրերը պիտի լինին , ցորեան միան աստ :

—Վեհ. Սուլթանն ի նշան իւր բարձր համարման առ Մեծ-Եպարքոս Քեմալի փաշա , բարեհաճեցաւ Ն. Բարձրութեան նուիրել 2000 կանգուն տարածութեամբ գետին մը ի նշան թաղ : Մայր թաղուհայն ապարանքին դէմ Ն. Վեհափառութիւնն հրամայած է միանգամայն որ այդ գետինն վրայ ապարանք մը կառուցուի Ն. Բարձրութեան բնակութեան համար :

—Հինգերորդ կարգի Մէճիլիյէ պատուանշան տրուեցաւ Բերայի թնդաթաճիգ զօրաց տիպար-փաշային վերադարձ գերհազարապետ թուանցեան Սեմսէ էֆէնտի :

—Իզմիրէն մայրաքաղաքս հասած հեռագիրը կը ծանուցանեն թէ շարաթ իրիկուն Պաւլոնապատի մօտ աւազակաց խումբ մը պաշարելով չորս անգլիացի երիտասարդներ որը այդ գիւղին շրջակայքը պտոյտի ելած էին , ուսեւանգեր եւ լեռը տարեր են զանոնք : Նահանգին իշխանութիւնը այսպիսի ծախսող պարագայներու մէջ ընդունուած սովորութեան հետեւելով , չեն փորձեր աւազակներն հալածել որպէս զի երիտասարդաց կեանքը վտանգի չենթարկուի եւ կը խորհին կարգադրութիւն մ'ընել զանոնք գոհացնելու համար : Կըսուի թէ աւազակը 10,000 ոսկի փրկանք կը պահանջէր Մայրաքաղաքի անգլիական գեսպանատունն այս մասին ձեռնարկներ ըրած է Ն. Գրան մօտ :

—Հանքաց իւր կանոնադրը վաւերացած է կայսերական իրաւէի եւ գործադրութեան պիտի դրուի ի մօտ : Այդ բարեփոխել կանոնադրի տրամադրութեանց համաձայն , ձեւակերպութիւնը պարզ եղանակի մը վերածուած են , քօքի համար 5 առ 100 տուրքը վերահաստատուած է : ձեռնարկու մը երբ հանք փնտնուելու արտօնագիր ստանայ , չպիտի կարենայ 700 տակառաջութիւն աւելի հանել : փոխադարձաբար , հանքաց շահագործման Ֆէրմանք աւելի կարճ պայմանագրով մը մէջ պիտի ելնեն : արտօնատեղք պարտաւոր պիտի լինին ամեն տարի որոշուող տուրք մը վճարել մէջ մը արտադրի համար :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Ազգային ժողովն ի նիստ գումարեցաւ այս հինգ շաբթի օր Ղարաթիոյ Կեդրոնական Վարժարանին մէջ եւ Քաղաքական ժողովը ընտրութիւն կատարեց Առեւտրական Վարժարանին կողմէ պատրաստեալ երկուստիկ ցանկի միջոցով Կարկութեան Կարկութեան մէջ իսկական մեծամասնութիւն կամ որոշող ձայնից մ'արանութիւն գոյացած չլինելով , Առեւտրական Մեծ. Բարութիւն էֆէնտի Մէրէմ-Կուլի յայտարարեց թէ ըստ Ներքին Կանոնագրի , ներկայ նստին մէջ բռնից մեծամասնութիւն միայն պիտի փնտաւրուի , ըստ այնմ , քուէարկութիւն կատարուելով , բուէից առաւելութեան կարգաւ Քաղաքական ժողովը անգամ ընտրուեցան :

Տ Ե Ա Ր Դ

Ապրի Մահալ էֆէնտի
Թորոսեան Յովհաննէս էֆէնտի
Կիւլպէնկեան Պատրիկ
Մաքսուտեան Սիմոն Պէյ
Սըվաճեան Կարապետ էֆէնտի
Հազարեան Կարապետ
Չայեան Իլիաս
Ազնաւորեան Յովհաննէս

Քալաւաճեան Կարապետ էֆէնտի
Արաւաճեան Սարգիս
Գարրիէլեան Գարրիէլ
Հաճեան Խաչիկ
Մարկոսեան Գրիգոր
Ասլանեան Մանուկ

Քուէարկութեան չմասնակցեցեան հինգ երեսփոխանք :

—Պալլէսիի Գաւառական ժողովոյն կողմէ յԱզգ. Պատրիարքարան ուղղեալ ընտրական տեղեկագիր մը կը ծանուցանէ թէ վիճակին Առաջնորդ ընտրուած է Գաւառ-գիւղի քարապիլ Սլավաքեան Արթ. Եղիշէ վարդապետ :

—Ի պատասխանի Կրօնական ժողովոյ խնդրած տեղեկութեանց , Պալլէսիի Առաջնորդ Գեր. Յովհաննէս Կալսիկոսոս Աստուծատուրեան գրած է ի Պատրիարքարան թէ վիճակին մէջ Բողոքականութիւն չի կայ բնաւ :

—Անցեալ ուրբաթ առաւ Սեւակընի հանգէսէն յետոյ , Վեհափառ Միթարեան Միաբանութեան Արաւաճայր Գեր. Իգնատիոս Արքեպիսկոպոս պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու : Ն. Վեհափառութիւնն բարեհաճեցաւ զոչունակութիւն յայտնել որ ինչեալ Միաբանութիւնն օտմ հաւատարմութիւնը պահելէ չէ զաղրաւ , եւ թէ շուրջ երկու դարէ հետեւ օտմ դրօշը կը ծածանի Ս. Ղազարու վանքին վրայ :

Անկնդրութիւնը տեւեց շուրջ կէս ժամ , որոյ միջոցին Վեհ. Սուլթանը ծանոյց , թէ բաց ի Գեր. Արաւաճայր նուիրեալ պատուանշանն , Գ. կարգի Օմմահիթ կը շնորհէ նաեւ Գեր. Հայր Ղեւոնդ վարդապետ Արիւշանի :

—Յաւօք կը ծանուցանենք թէ Ազգ. Պատրիարքարանի նախորդ զիւանապետ ՌՈՎՄԱՍ ԷՖէնտի ՓԱՓԱՋԵԱՆ օր ժամանակէ մ'ի վեր հիւանդ էր , ի Տէր Հանգեաւ կիւրակէ օրը յՍթագիւղ , Յաղարկաւորութեան հանդիսին նախագահեց զիւրին քարապիլ Գեր. Վահրամ Կալսիկոսոս Մանուկի :

Թովմաս էֆէնտի 1855 թուականին Յակոբ Պատրիարքի օրով պաշտօնի սկսած է եւ անընդհատ ծառայած Յակոբ. Գէորգ , Սարգիս , Պողոս , Խրիմեան եւ Ներսէս Պատրիարքաց օրով : Հանգըցեալը չորս տարիէ ի վեր պաշտօնէ քաջուած էր իւր ծերութեան ու տկարութեան պատճառաւ եւ հանգստեան համեստ ամսովն ունի մը կ'ըստանար :

—Հայ բժշկաց դասն ոլորալի կորուստ մ'ունեցաւ տարածում մահուամբ իւր տաղանդաւոր եւ երիտաւոր մէկ անդամին՝ ՏՐ. ՄԱՐՏԻԿ ԳԱՎԷՖԵԱՆԻ , որ կիւրակէ տառաօտ կնքեց իւր մահկանացուն յՍթագիւղ ի 27ամեայ ծաղիկ հասակի :

Մարտիկ էֆ. Գաւառեան շատ կանուխէն ընդգրկելով բժշկական տաղանդը , փայլուն յաջողութիւններով պատկուած էր իւր տաղանքի քայլերուն մէջ իսկ եւ գեղեցիկ տաղաց մ'ունէր իւր տղեւ , երբ տաղանքի հիւանդութիւն մը եւ վաղահաս մահ մը կորցնէին զինքն իւր ծնողաց զընկէն : Պողոս կայս. բժշկական վարժարանին մէջ Տրեգորութեան վկայական ստանալէ յետոյ , Բարիլ գնացաւ Սթալիական Համալսարանին ուսմանց հետեւեցաւ : զընթացող տարի իւր հիւանդագիրն զճակը չը ներեց նմա երկար ժամանակ մնալ Թրանսայի ուսանին եւ Ա. Պոլիս վերադարձաւ իւր երեք տարի տաղ : Իւր պարագայ ժամերուն մէջ — վստայի տկարութիւնը չէր ներեր նմա ի զործ ածել իւր արուեստը — Տր. Գաւառեան կը պարագայէր գրականութեամբ եւ գրած է յօդուածներ ու զոլորիկ վկայեր որոց մի քանին հրատարակուեցան Սեւե. Ի ու Մաքսի մէջ « Թալիկ » ծածկանուամբ : տարաքաղք երիտասարդն « յՂ զբաղմունքով կը փորձէր մոռնալ պահ մը իւր հիւանդութիւնն , Ազնաւորքերով օժտեալ եւ ի բնէ համակրելի » Տր. Գաւառեան քաղցր յիշատակներ կը թողուր զինքն ծանցողներուն օրը վստահար կը հետեւէին իւր դադաղին :

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿՐ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ ՀԵՏԵԻՆԱԼ ՀՈՏԱԻՏ ՆԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արգելադրողի համար Ambrosial cream, օճառաւ գութ օճիւղ մարդու համար. Crème de Fraises մորթի կախողցնելու համար. Poudre de Cyprès զովացնելու եւ ձերմկցնելու համար մորթի. Stilboideինալ տալու համար մազերուն եւ մորուքին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat de Cochlearia ակալյներու համար. Eau de Chypre արդուզարդի համար. թաշկինակի համար հոտաւէտ նիւթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Marie Christine. 977 13—26

ՆՈՐ ԴԱՍԱԿԻՐՔ

ԹՈՒՍԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ԵՐՈՒԱՆԴ Կ. ԳԱՐԹԱՂԱԵԱՆ

Դասադրու

Չափական գիտութեանց

Ազգային դաստոռներէն երուանդ էֆ. Կ. Գարթաղեանի սոյն դասադրքն, որ կը պարունակէ թուարանութեան տեսական եւ գործնական մասը միանգամայն, բազմամեայ փորձառութեան եւ մեծ խնամոց արդիւնք է:

Թուարանութեան բոլոր կանոնք կոկիկ եւ դիւրամբողջով ոճով բացատրուած են, եւ մեղրական, շահու եւ վաճառականական հաշուոց վերաբերեալ կանոնք ընդարձակ տեղ մը կը գրաւեն սոյն նոր դասադրքին մէջ: Բաց աստի, մասնաւոր ուշադրութեւց եղած է որ իրաքանչիւր կանոնի յարակին խնդիրք թուրքիոյ առեւտրական գործառնութեանց եւ առտնին կենաց պիտոյից հաւաքած ըլլան, առանց որոյ թուաբանական խնդիրք շատ անգամ տաղտկացուցիչ եւ աւելորդ կ'ըլլան:

Հմուտ թուաբանին սոյն աշխատասիրութիւնը մեր ազգ. վարժարանաց մէկ զգալի պէտքը կուգայ լրացնել եւ բառնալ աշակերտաց ձեռքէն աւանդական դրութեամբ պատրաստուած շատ մը դասագրքերը:

Կը գտնուի ամէն գրաւաճառաց քով. կեդրոնատեղին է Յակոբեան խան, թիւ 14, Եւրոպական գրատուն, Ա. Պիլէսճեանի քով:

Գինն է 7 1/2 զրուշ

Շատ առնողին մասնաւոր գինը կ'ըլլուի 886 50—50

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Հանդերձ Հայերէն բացատրութեամբ

Յօրինեաց ԵՂԻԱԶԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Երկրորդ Տպագրութիւն

Քննուած եւ խիստ ցոխացած Լարուսի ընթացքին վրայ

Ազգային Կեդր. Վարչութեան Պատ. Խառն Ժողովոյ կողմէ ընտրեալ դասագրոց մէջ ֆրանսերէն լեզուի Բերականութեան այս ՄԻԱԿ դասագրքն կը վաճառուի ի գին 6 զրուշի:

Կեդրոնատեղին է Պաղտատեան Գրատունը, Կ. Պոլիս, Յակոբեան խան, թիւ 14:

1171

2—10

ՕՐԱՑՈՅՑ

1888

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿԶԵԱՆ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

Գին 40 փարս

Մասնաւոր վաճառատեղին է գրավաճառ Յովսէփ էֆ. Դավաֆեանի գրատունը, Կ. Պոլիս, Չաքմաքճըլար-Եօքուշու, թիւ 20:

Հիւանդանոցի Հոգաբարձութեան կնիքը չկող օրինակներն անվաւեր են. 1071 8—10

ԱՌԱՋՆՈՐԴ

ԹՐԿՄԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Խ. ՍԻՄՕՆԵԱՆ

Վաւերացեալ յՈՒՆԱՆԻՍԻՆ ԽՐԷՐԴՅԱՆ ԱԿԲ. ՎԱՐԷ

Այս դասագրքն իւր դիւրութեամբ մէթոտին եւ ընթերցելի հատուածոց ընտրութեան կողմանէ ընդհանուր հաւանութեան արժանացած եւ մուտ գտած է մայրաքաղաքիս եւ գաւառաց գրեթէ բոլոր դպրոցաց մէջ: Ըստ վիպուկեան գաղղ. լեզուի ձեռնհաս ուսուցչաց՝ անհրաժեշտ դասագրքն է առ մեզ գաղղիերէնէ ի հայ լեզու թարգմանութեան վարժութեան համար եւ ընտիր առաջնորդ մ'է նորաւարժ

Հայ մանկան գաղղիերէն լեզուի նախնական տարերց ղ իւրութեամբ ընտելանալու կեդրոնատեղին է Պիլէսճեան գրատունին ի Յակոբեան խան. կը գտնուի եւ այլ գրաւաճառաց քով:

Գինն է 3 դահեկան

1120

4—12

Վասն Սրտօնատեան

Տօրօշն-Պատասխանատու

Լ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՑ

ՄԼՏԵՄՍ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ

ԵՇ ԵՐԷՆՈՒԹԵԱՆՈՒ ՄԼՏ. ՆՈՐՈՒՄԻՐ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)



Ճիւղմակ ընկած մազերուն գոյն, վերինձ ու գեղկուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը եւ աճումը: Գլխու թեփը շուտ մը անկրկնութիւնէ: Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի:

“Սէկ շեշը կը բաւէ:” Եւ փորձը ունեցան ամենքը որոնցմիտքառնած մազերը իրենց բնական գոյնին դարձան, եւ ճաղատ տեղերը մազով ծածկուեցան:

Կեբէկէ, եւ ամենեւին ղեան մը շքնէր: Ինչ որ կ'ուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շեշ մը ստացիր ԳԼՏՄՍ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ Զաւաճառու խաղէ նորոգողէն: (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիոու Եօքը: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւր Եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Բարուան. Անգլիական մթերանոց, Նիւքսէք Գալտըրըմ. եւ Իզիտօր Լագանտէլա 455, Բերա Մեծ փողոց:

ՀԵՐԱՆՆԵԿԱՆ ԾԱՂԱԿՆՔՈՒՆԸ

ԳԵՂԵՑԿԱՆՈՒՆՈՂ ՄԼՏՄՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ

ԾԱՂԱԿՆՔՈՒԹ, ՄԻՇՏ ԹԵՐՄ:



Ընգամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ եւ բազմաթիւ փոշիներէ: Ընգամ անգամ գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի խնկոյն որ երեսը, վիզը, թեւերը եւ ձեռքները պիտի առնուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիոնի փայլ: Հանգերձ շուշանի եւ վարդի գունով եւ բուրմամբ: Սպարի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցուն: Ընհետ կ'ընէ մորթի սեւեւը, երեսի եւ ձեռքի ցանկերը, արեւայրուրը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բժաւորութիւն: Եւ աս ամեն բանով անկարելի կ'ընէ մասնուել թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիոու Եօքը: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւր Եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Բարուան. Անգլիական մթերանոց, Նիւքսէք Գալտըրըմ. եւ Իզիտօր Լագանտէլա 455, Բերա մեծ փողոց:

Կը հանդարտեցուն: Ընհետ կ'ընէ մորթի սեւեւը, երեսի եւ ձեռքի ցանկերը, արեւայրուրը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բժաւորութիւն: Եւ աս ամեն բանով անկարելի կ'ընէ մասնուել թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիոու Եօքը: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւր Եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Բարուան. Անգլիական մթերանոց, Նիւքսէք Գալտըրըմ. եւ Իզիտօր Լագանտէլա 455, Բերա մեծ փողոց:



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒ:

ՄԼԷԼՐՈՅ

ՄԼՏԵՐՈՒ ՄԼԷԼ ԶԱՏԻԿ ՆՈՐՈՒՄԻՐ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ձերմըկած կամ գունաթափ մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շեշերու մէջ: Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիոու Եօքը:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւր Եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Բարուան. Անգլիական մթերանոց, Նիւքսէք Գալտըրըմ. եւ Իզիտօր Լագանտէլա 455, Բերա Մեծ փողոց: